ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/1

ք.Երևան «13» փետրվարի 2026թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Եսայանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա առավելագույն ծառայության գինը կազմում է **8 951 520 (Ութ միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար հինգ հարյուր քսան)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ծառայության մատուցումը իրականացվում է Հավելված N 1"1-ով սահմանված ծառայությունների մատուցման գնացուցակին համապատասխան:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը և պայմանագրով նախատեսված պայմանները տարածվում են 2026 թվականի փետրվարի 1-ից ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ

և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և

արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք.Երևան, Ազատության-24/1
ՀՀ ֆինանսների նախարարության	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011054013	Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 02500052
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի տնօրեն՝
Է.Գևորգյան	Հ.Եսայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«13» փետրվարի 2026 թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

CPV - 72411100/4

Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ

(ՀՀ ՊԵԿ տվյալների փոխանցման տեղեկատական ցանցի սպասարկման ծառայություններ)

ՀՀ ՊԵԿ տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցը (այսուհետ՝ ցանց) ապահովում է էլեկտրոնային կապը վերադաս մարմնի և իր ստորաբաժանումների միջև:

Ցանցը պետք է ապահովի տեղեկատվության փոխանակման շուրջօրյա հնարավորություն, ներառյալ ոչ աշխատանքային օրերը և ժամերը: Ցանցը պետք է լինի պաշտպանված, փակ ցանց և չպետք է լինի կապված ոչ մի այլ համակարգչային ցանցերի հետ:

Կատարողը պետք է ապահովի ցանցում տվյալների փոխանցման արագությունը, անվտանգությունը և գաղտնիությունը:

Կատարողը պետք է ապահովի նաև ցանցի շուրջօրյա սպասարկումը և տեխնիկական աջակցումը:

Կատարողը պետք է իրականացնի ցանցի նախագծման, կառուցման և հետագա սպասարկման ծառայությունները: Կատարողը ցանցը նախագծելիս պետք է կիրառի արագագործ, ապահով և ժամանակակից տեխնոլոգիաներ:

Ցանցի նախագծման ժամանակ կատարողը պետք է ՀՀ ՊԵԿ համապատասխան աշխատակիցների հետ հետ համաձայնեցնի կիրառվելիք տեխնոլոգիաները:

Կատարողը պետք է որոշի, թե ինչպիսի արտաքին սարքավորումներ և ծրագրեր են անհրաժեշտ ցանցը միացնելու կամ վերակառուցելու համար, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ համապատասխան աշխատակիցների հետ համաձայնեցնի նախագծի նկարագրությունը, անհրաժեշտության դեպքում ներկայացնի հիմնավորումները և ապահովի նախագծի ներդրման ընթացքը:

Կատարողը պարտավորվում է չբացահայտել ծառայությունների մատուցման ժամանակ նրան հասանելի դարձած տեղեկատվությունը: Պատվիրատուի պահանջի դեպքում Կատարողը պարտավոր է ստորագրել տեղեկատվության չբացահայտման համաձայնագիր (NDA: Non-disclosure agreement - կցվում է):

Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ

(Օպտիկամանրաթելային կապի միջոցներով տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի սպասարկման ծառայություններ)

Ծառայությունը պետք է տրամադրվի «OSI Layer 2» (տվյալների փոխանակման) մակարդակում, ինչը հնարավորություն կընձեռի ՀՀ ՊԵԿ-ին ստեղծել ժամանակակից էլեկտրոնային կառավարման վիրտուալ մասնավոր ցանց, որն ամբողջովին առանձնացված կլինի արտաքին աշխարհից և պաշտպանված կլինի արտաքին մուտքերից կամ ներխուժումներից՝ լինելով ներփակված զուտ ՀՀ ՊԵԿ ներքին ցանցային ենթակառուցվածքում:

Տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի տեխնիկական բնութագիր

Անվանումը	Նկարագրությունը
Առանձնացված կապուղի	2 առանձնացված օպտիկամանրաթելային կապուղու ապահովում և ցանցային ուղղորդում 2 իրարից անկախ կապի ծառայությունների մատակարար ընկերություններից (այսուհետ՝ ԿԾՄ) ք. Երևան Ահարոնյան 12/3 հասցեից (հիմնական հանգույց) դեպի ք. Դիլիջան պարզ լիճ 5 (պահուստային հանգույց) - առնվազն Հավելված 1-ում նշված արագությամբ: *
	2 առանձնացված օպտիկամանրաթելային կապուղու ապահովում և ցանցային ուղղորդում 2 իրարից անկախ ԿԾՄ-ի կողմից հիմնական, պահուստային հանգույցների և հավելված 2,3,4 կետերի միջև: *
	Օպտիկամանրաթելային կապուղու ապահովում և ցանցային ուղղորդում Հավելված 3-ի, 4-ի կետերի և հիմնական հանգույցի միջև:
Պայմաններ	"Routing with multiple redundancy paths and resiliency" հիմնական, պահուստային հանգույցների և Հավելված 2,3,4-ի կետերի միջև:
	ԿԾՄ-ն պետք է ապահովի առնվազն Հավելված 2,3,4-ում նշված համապատասխան արագություններով երաշխավորված, երկկողմանի (սիմետրիկ) տվյալների փոխանցման հնարավորություն ցանկացած կետում: Հավելված 1,2,3,4-ում նշված հասցեներում տրամադրել առանձնացված VLAN-ներ հեռախոսակապի և տեսահսկման համակարգի համար: Հավելված 2-ում մոնիտորինգային կենտրոնի (ք.Երևան, Ծովակալ Իսակովի 10) համար նշված պահանջը Տվյալների մշակման կենտրոններում (ՏՄԿ) պետք է տրամադրվի առանձին պորտով, ըստ անհրաժեշտության:
	• Անհրաժեշտ սարքավորումների տրամադրում, տեղադրում, կարգաբերում և սպասարկում • Ապահովել ցանկացած կետում ցանկացած VLAN Id օգտագործման հնարավորությունը • Տարբեր կետերի խմբավորումը ըստ ծառայությունների «Leyer2» ենթացանցերի • Ապահովել համակցում վերոնշյալ «Leyer2» խմբերի միջև • Ապահովել ցանկացած «Leyer2» պրոտոկոլների թափանցելիություն ցանկացած կետում

Լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություն	Ինտերնետ կապի տրամադրում առնվազն 300mb/s արագությամբ, ինչպես նաև առնվազն 500 mb/s արագությամբ ՀՀ տարածքում գործող .am տիրույթներում, ՀՀ ՊԵԿ-ի երկու Տվյալների մշակման կենտրոններում (ՏՄԿ)՝ ք.Երևան, Ահարոնյան 12/3 և ք.Դիլիջան, Պարզ լիճ 5: Պահուստային ԿԾՄ-ն պետք է տրամադրի առնվազն 300mb/s արագությամբ, ինչպես նաև առնվազն 500 mb/s արագությամբ ՀՀ տարածքում գործող .am տիրույթներում, ՀՀ ՊԵԿ-ի երկու ՏՄԿ-ներում՝ ք.Երևան, Ահարոնյան 12/3 և ք.Դիլիջան, Պարզ լիճ 5: ԿԾՄ-ն պետք է տրամադրի 2-ական x.x.x.x/26 և 2-ական x.x.x.x/28 (real ip) հասցեների տիրույթ: ԿԾՄ-ն պետք է հոգա ՀՀ ՊԵԿ-ին պատկանող 185.44.228.0/24 և 185.44.229.0/24 (real ip) հասցեների տիրույթին և 56974 ASN-ին վերաբերող սպասարկման ծախսերը RIPE-ում, ինչպես նաև RIPE-ին անդամակցության տարեկան ծախսը: ԿԾՄ-ն և պահուստային ԿԾՄ-ն պետք է տրամադրեն BGP ծառայության հնարավորություն և հասանելիություն ՀՀ ՊԵԿ-ի երկու ՏՄԿ-ներում՝ ք.Երևան, Ահարոնյան 12/3 և ք.Դիլիջան, Պարզ լիճ 5:
Որակի պահանջներ	• Ծառայությունների մատուցման ընթացքում հավելված 1,2,3-ի որևէ կետում կապի խափանումների (բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 2-ը: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամանակով, • Ծառայությունների մատուցման ընթացքում հավելված 4-ի որևէ կետում կապի խափանումների (բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 2-ը: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 120 րոպեից ավելի ժամանակով:
	• Ծառայությունների մատուցման ընթացքում հավելված 1,2,3 -ի որևէ կետում կապի խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածը չպետք է գերազանցի 120 րոպեն, իսկ հավելված 4-ի որևէ կետում՝ 240 րոպեն: Սույն դրույթի իմաստով կապի խափանման (բացակայության) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում տվյալ կետում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածների հանրագումար:

* Նշված հանգույցների միջև յուրաքանչյուր ԿԾՄ պետք է տրամադրի տեղեկատվական ցանց՝ չօգտագործելով մյուս ԿԾՄ-ի տեղեկատվականցանցը (կապուղի, հանգույց և այլն):

Հավելված 1

Հ/Հ	Հասցե	Արագություն	Գինը՝ օրական կտրվածքով (ներառյալ ԱԱՀ)
1.	ք.Երևան, Ահարոնյան 12/3	5Gb/s	
2.	ՀՀ Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Պարզ լիճ 5	5Gb/s	

Հավելված 2

Հ/Հ	Հասցե	Արագություն	Գինը՝ օրական կտրվածքով (ներառյալ ԱԱՀ)
1.	ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4	500Mb/s	
2.	ՀՀ Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փ. թիվ 69	500Mb/s	
3.	ՀՀ Լոռու մարզ, Սարչապետ համայնք, գ. Գոգավան, փող. 1, թիվ 25	500Mb/s	
4.	ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ.Կարճևան, Մայրուղի 4	500Mb/s	
5.	ՀՀ Տավուշի մարզ, գ.Այրում, Երկաթուղային 20	500Mb/s	
6.	ք.Երևան, Մ.Խորենացու - 3, 7 և 7ա	1Gb/s	
7.	ք.Երևան, Ծովակալ Իսակովի 10 և 10/16	1Gb/s	
8.	ք.Երևան, Ծովակալ Իսակովի 10 (Մոնիտորինգային կենտրոն)	1Gb/s	
9.	Երևան – 42, «Զվարթնոց» օդանավակայան	300Mb/s	
10.	Շիրակի մարզ Գյումրի համայնքի Թբիլիսյան խճուղի 2/14	300Mb/s	

Հավելված 3

Հ/Հ	Հասցե	Արագություն	Գինը՝ օրական կտրվածքով (ներառյալ ԱԱՀ)
1.	ք.Երևան, Կոմիտաս 35	300Mb/s	
2.	ք.Երևան,Դեղատան 3	200Mb/s	
3.	ք.Երևան, Անդրանիկի փող. 37/1	1Gb/s	
4.	ք.Երևան, Հյուսիսային փող. 6	100Mb/s	
5.	ք.Երևան, Տիգրան Մեծ 1-ին նրբ.	100Mb/s	
6.	ք.Երևան, Ս. Դավիթ 87 և 87ա	100Mb/s	
7.	ք.Երևան, Շինարարների փ. 3/1	100Mb/s	
8.	ք.Երևան, Մոլդովական 41/3	100Mb/s	
9.	ք.Երևան, Մանթաշյան փ. 55	100Mb/s	
10.	ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Հովսեփյան 1	100Mb/s	
11.	ք.Երևան, Արշակունյաց պողոտա 135 շենք, Էրեբունի օդանավակայան	300Mb/s	

Հավելված 4

Հ/Հ	Հասցե	Արագություն	Գինը՝ օրական կտրվածքով (ներառյալ ԱԱՀ)
1.	ՀՀ Շիրակի մարզ, «Շիրակ» օդանավակայան	200Mb/s	
2.	ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Մոսկովյան 44	100Mb/s	
3.	ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան-Երևան մայրուղու 7-րդ կմ, Շաքե համայնք	100Mb/s	
4.	ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Պռոշյան 29	100Mb/s	
5.	ՀՀ Արարատի մարզ, ք.Արտաշատ, Օգոստոսի 23, թիվ 83	100Mb/s	

6.	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Հերոս քազաք Նովորոսիյսկի 4	100Mb/s	
7.	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Գորիս, Տաթևանցու 9	100Mb/s	
8.	ՀՀ Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, Նարեկացի 8/3	100Mb/s	
9.	ՀՀ Արմավիրի մարզ, ք.Էջմիածին, Նար-Դոսի 11	100Mb/s	
10.	ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան, Անկախության 12	100Mb/s	
11.	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան, Մինասյան փողոց 20ա	100Mb/s	
12.	ՀՀ Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Բարեկամության հրապարակ-1	100Mb/s	
13.	ՀՀ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Սպանդարյան փ 24/1-24/2	100Mb/s	
14.	ք.Սևան, Սայաթ-Նովա 1/1	100Mb/s	
15.	ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Վարդանանց 11	100Mb/s	
16.	ք. Երևան, Սևանի 104/2	60Mb/s	
17.	ք.Երևան, Արարատյան 90	100Mb/s	
18.	ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գ. Մարգարա, Արմավիր-Մարգարա մայրուղի 12	100Mb/s	

Նկարագիր	Գինը՝ օրական կտրվածքով (ներառյալ ԱԱՀ)
Ինտերնետ կապի տրամադրում առնվազն 300mb/s արագությամբ, ինչպես նաև առնվազն 500 mb/s արագությամբ ՀՀ տարածքում գործող .am տիրույթներում, ՀՀ ՊԵԿ-ի երկու Տվյալների մշակման կենտրոններում (ՏՄԿ)՝ ք.Երևան, Ահարոնյան 12/3 և ք.Դիլիջան, Պարզ լիճ 5: Պահուստային ԿԾՄ-ն պետք է տրամադրի առնվազն 300mb/s արագությամբ, ինչպես նաև առնվազն 500 mb/s արագությամբ ՀՀ տարածքում գործող .am տիրույթներում, ՀՀ ՊԵԿ-ի երկու ՏՄԿ-ներում՝ ք.Երևան, Ահարոնյան 12/3 և ք.Դիլիջան, Պարզ լիճ 5: ԿԾՄ-ն պետք է տրամադրի 2-ական x.x.x.x/26 և 2-ական x.x.x.x/28 (real ip) հասցեների տիրույթ: ԿԾՄ-ն պետք է հոգա ՀՀ ՊԵԿ-ին պատկանող 185.44.228.0/24 և 185.44.229.0/24 (real ip) հասցեների տիրույթին և 56974 ASN-ին վերաբերող սպասարկման ծախսերը RIPE-ում, ինչպես նաև RIPE-ին անդամակցության տարեկան ծախսը: ԿԾՄ-ն և պահուստային ԿԾՄ-ն պետք է տրամադրեն BGP ծառայության հնարավորություն և հասանելիություն ՀՀ ՊԵԿ-ի երկու ՏՄԿ-ներում՝ ք.Երևան, Ահարոնյան 12/3 և ք.Դիլիջան, Պարզ լիճ 5:	

Ծառայության մատուցման ժամկետը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 40 օրացուցային օր:

- **Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի փետրվարի 1-ից ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:**
- **Մասնակիցը պետք է ներկայացնի գնի բացվածք օրական կտրվածքով՝ հավելված 1, 2, 3 և 4-ում նշված հասցեների համար:**
- **Գնման ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ձևով և ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի դ/ պարբերության հիման վրա:**
- **Վճարումը կատարվում է փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
_____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
ք.Երևան, Ազատության-24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի տնօրեն՝

Հ.Եսայան
_____
(ստորագրություն)
Կ.Տ

«13» փետրվարի 2026 թ.

Հավելված N 1.1
կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆԱՑՈՒՑԱԿ ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ

Հավելված 1

Հ/Հ	Հասցե	Արագություն	Գինը՝ օրական կտրվածքով (ներառյալ ԱԱՀ)
1.	ք.Երևան, Աիարոնյան 12/3	5Gb/s	52200
2.	ՀՀ Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Պարզ լիճ 5	5Gb/s	52200

Հավելված 2

Հ/Հ	Հասցե	Արագություն	Գինը՝ օրական կտրվածքով (ներառյալ ԱԱՀ)
11.	ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4	500Mb/s	5220
12.	ՀՀ Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փ. թիվ 69	500Mb/s	5220
13.	ՀՀ Լոռու մարզ, Սարչապետ համայնք, գ. Գոգավան, փող. 1, թիվ 25	500Mb/s	5220
14.	ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ.Կարճևան, Մայրուղի 4	500Mb/s	5220
15.	ՀՀ Տավուշի մարզ, գ.Այրում, Երկաթուղային 20	500Mb/s	5220
16.	ք.Երևան, Մ.Խորենացու - 3, 7 և 7ա	1Gb/s	10440
17.	ք.Երևան, Ծովակալ Իսակովի 10 և 10/16	1Gb/s	10440
18.	ք.Երևան, Ծովակալ Իսակովի 10 (Մոնիտորինգային կենտրոն)	1Gb/s	10440
19.	Երևան – 42, «Զվարթնոց» օդանավակայան	300Mb/s	3132
20.	Շիրակի մարզ Գյումրի համայնքի Թբիլիսյան խճուղի 2/14	300Mb/s	3132

Հավելված 3

Հ/Հ	Հասցե	Արագություն	Գինը՝ օրական կտրվածքով (ներառյալ ԱԱՀ)
12.	ք.Երևան, Կոմիտաս 35	300Mb/s	3132
13.	ք.Երևան,Դեղատան 3	200Mb/s	2088
14.	ք.Երևան, Անդրանիկի փող. 37/1	1Gb/s	10440
15.	ք.Երևան, Հյուսիսային փող. 6	100Mb/s	1044
16.	ք.Երևան, Տիգրան Մեծ 1-ին նրբ.	100Mb/s	1044

17.	ք.Երևան, Ս. Դավիթ 87 և 87ա	100Mb/s	1044
18.	ք.Երևան, Շինարարների փ. 3/1	100Mb/s	1044
19.	ք.Երևան, Մոլդովական 41/3	100Mb/s	1044
20.	ք.Երևան, Մանթաշյան փ. 55	100Mb/s	1044
21.	ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Հովսեփյան 1	100Mb/s	1044
22.	ք.Երևան, Արշակունյաց պողոտա 135 շենք, Էրեբունի օդանավակայան	300Mb/s	3132

Հավելված 4

Հ/Հ	Հասցե	Արագություն	Գինը՝ օրական կտրվածքով (ներառյալ ԱԱՀ)
19.	ՀՀ Շիրակի մարզ, «Շիրակ» օդանավակայան	200Mb/s	2088
20.	ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Մոսկովյան 44	100Mb/s	1044
21.	ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան-Երևան մայրուղու 7-րդ կմ, Շաքե համայնք	100Mb/s	1044
22.	ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Պռոշյան 29	100Mb/s	1044
23.	ՀՀ Արարատի մարզ, ք.Արտաշատ, Օգոստոսի 23, թիվ 83	100Mb/s	1044
24.	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Հերոս քազաք Նովորոսիյսկի 4	100Mb/s	1044
25.	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Գորիս, Տաթևանցու 9	100Mb/s	1044
26.	ՀՀ Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, Նարեկացի 8/3	100Mb/s	1044
27.	ՀՀ Արմավիրի մարզ, ք.Էջմիածին, Նար-Դոսի 11	100Mb/s	1044
28.	ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան, Անկախության 12	100Mb/s	1044
29.	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան, Մինասյան փողոց 20ա	100Mb/s	1044
30.	ՀՀ Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Բարեկամության հրապարակ-1	100Mb/s	1044
31.	ՀՀ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Սպանդարյան փ 24/1-24/2	100Mb/s	1044
32.	ք.Սևան, Սայաթ-Նովա 1/1	100Mb/s	1044
33.	ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Վարդանանց 11	100Mb/s	1044
34.	ք. Երևան, Սևանի 104/2	60Mb/s	624
35.	ք.Երևան, Արարատյան 90	100Mb/s	1044
36.	ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գ. Մարգարա, Արմավիր-Մարգարա մայրուղի 12	100Mb/s	1044

Նկարագիր	Գինը՝ օրական կտրվածքով (ներառյալ ԱԱՀ)

Ինտերնետ կապի տրամադրում առնվազն 300mb/s արագությամբ, ինչպես նաև առնվազն 500 mb/s արագությամբ ՀՀ տարածքում գործող .am տիրույթներում, ՀՀ ՊԵԿ-ի երկու Տվյալների մշակման կենտրոններում (ՏՄԿ)՝ ք.Երևան, Ահարոնյան 12/3 և ք.Դիլիջան, Պարզ լիճ 5: Պահուստային ԿԾՄ-ն պետք է տրամադրի առնվազն 300mb/s արագությամբ, ինչպես նաև առնվազն 500 mb/s արագությամբ ՀՀ տարածքում գործող .am տիրույթներում, ՀՀ ՊԵԿ-ի երկու ՏՄԿ-ներում՝ ք.Երևան, Ահարոնյան 12/3 և ք.Դիլիջան, Պարզ լիճ 5: ԿԾՄ-ն պետք է տրամադրի 2-ական x.x.x.x/26 և 2-ական x.x.x.x/28 (real ip) հասցեների տիրույթ: ԿԾՄ-ն պետք է հոգա ՀՀ ՊԵԿ-ին պատկանող 185.44.228.0/24 և 185.44.229.0/24 (real ip) հասցեների տիրույթին և 56974 ASN-ին վերաբերող սպասարկման ծախսերը RIPE-ում, ինչպես նաև RIPE-ին անդամակցության տարեկան ծախսը: ԿԾՄ-ն և պահուստային ԿԾՄ-ն պետք է տրամադրեն BGP ծառայության հնարավորություն և հասանելիություն ՀՀ ՊԵԿ-ի երկու ՏՄԿ-ներում՝ ք.Երևան, Ահարոնյան 12/3 և ք.Դիլիջան, Պարզ լիճ 5:	10188

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
ք.Երևան, Ազատության-24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի տնօրեն՝

Հ.Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«13» փետրվարի 2026 թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության												
				Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	4232	72411100/4	Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ		8 951 520	8 951 520	8 951 520	8 951 520	8 951 520	8 951 520	8 951 520	8 951 520	8 951 520	8 951 520	8 951 520	**8 951 520**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝
Է.Գևորգյան
(անուն,ազգանուն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
ք.Երևան, Ազատության-24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի տնօրեն՝
Հ.Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«13» փետրվարի 2026 թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«13» փետրվարի 2026 թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
«13» փետրվարի 2026 թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.